

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Կիրակի, 9 Յունուար. Երեկոյեան ժամը 4-ին, Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Ս. Ծննդեան շնորհաւորութիւններու գնաց Ասորիներուն եւ Ղպտիներուն:

Հինգշաբթի, 13 Յունուար. Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի մէջ Ամերիկայի դեսպանատան Պաղեստինեան գործերու վարիչ՝ Տիար Ժորճ Նոլ ընկերակցութեամբ իր բաժանմունքի աշխատակիցներու՝ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Ուրբաթ, 21 Յունուար. Առաւօտեան ժամը 9-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան շնորհաւորելու եկան Ֆրանչիսկեան Միաբանութիւնը՝ փոխ-քիւսթոտի գլխաւորութեամբ եւ Բողոքական, Հապէշ, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը երեկոյեան, Երուսաղէմի Պապական Նուիրակի առաջին տեղակալը եւ քարտուղարը այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 28 Յունուար. Առաւօտեան ժամը 10-ին, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Պատրիարքարան շնորհաւորելու եկան Լատինաց Պատրիարքը եւ Միաբանութիւնը:

Զորեքշաբթի, 2 Փետրուար. Իսրայէլի Զբօսաշրջութեան նախարարութեան աշխատակիցները՝ առաջնորդութեամբ գլխաւոր քարտուղարի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան

ցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուրբաթ, 4 Փետրուար. Ռամալլայի մէջ Յունգարիոյ Ներկայացուցչական գրասենեակի պատասխանատու Տիար Կսապա Ռատի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 8 Փետրուար. Ռամալլայի մէջ Արժանթինի Ներկայացուցչական գրասենեակի պատասխանատու Տիար Էտուարտո Լիոմէլ Տէմայո այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի հետ:

Շաբաթ, 19 Փետրուար. Իսրայէլի մէջ Ռուսիոյ դեսպան Տիար Անատոլի Վիկտորով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ: Հանդիպումէն ետք Տիար Վիկտորով շրջայց կատարեց Հայոց Թաղէն ներս:

Հինգշաբթի, 24 Փետրուար. Պաղեստինի Աստուածաշնչային ընկերութեան ղեկավար Տիար Նաշատ Ֆիլմոն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Երեքշաբթի, 15 Մարտ. Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ դեսպան՝ Տիար Արման Յակոբեան, ուղեկցութեամբ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Տիար Նարեկ Ղազարեանի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ